

Հ(ա)կ վ(ա)րդ(ա)յ(ե)տն. եւ նորին խորհրդովն. եկեալ է ի տեղդ. կամի խորամանկու(թեամ)ր խարել զձեզ վ(ա)ն որոյ առաւել ի դմանէ զդոյշ լերուք քանզի չբարսեղն յայտնի նշաւակեալ է, եւ խայտառակեալ, իսկ դա ծածուկ ունի չարիքն ամբարեալ ի սրտի զոր ի դիպող ժամանակի կամի թափել զթոյնս դառնու(թ)ե(ան) իւրոյ, վ(ա)ս(ն) որոյ առաւելապէս աղաչեմ ի բաց կալ, եւ հեռի լինել ի մշակացդ անիրաւթե(ան), ըստ առաքելոյն պողոսի թէ զդոյշ լերուք մշակաց անտի, քանզի մեք լուաք թէ պիտի դայ ի տեղ արդեւեցաք. զի ինքեան յատուկ թուղթ գրեց որ չդայ ապա դուք տեղդ զդոյշ կացէք յաղաղս սիրոյն ք(րիստոս)ի եւ նորին օրինացն: Կատարողք հրամանաց մերոց ա(ւր)հնին յատուծոյ, եւ ամ(ենայն) սրբոց ն(ո)ր(ա) շնորհք տ(եառն) մերոյ յ(իսուս)ի քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ամէն:»

«Հայր մեր: Գր(ե)ց(ա)ւ ի թուին. ՌՃԻԸ (1679). յամսեանն մայիսի Ժ (10):»

Հաւատոյ Տարածման Ժողովոյ Դիւան: Congr. Armeno V III F. 196R.

Յակոբ Զուղայեցիի վերագրուած է Հայկական ազատագրական շարժման մը ղեկավարութիւնը, որու հիմը կրնան ըլլալ Ոսկերիոս Կարկուտի եւ Սահակ Ալլըմպիկի չարախօսութիւնները, հեշտութեամբ մասնութեան հաւասար, որոնցմով անոնք ջանացին հարուածել Յակոբ Զուղայեցին: Այդ ամբաստանութիւնները եթէ որեւէ կերպով ճիշդ ըլլային, Յակոբ Զուղայեցին չարաչար պիտի պատժուէր թէ՛ Օսմանեան ե թէ՛ Պարսկական սահմաններուն մէջ, որոնց երկուքին ալ մէջ Յակոբ Զուղայեցի ունէր ծայրահեղ հակառակորդներ: Տարակոյս չի կրնար ըլլալ որ այդ չարախօսութիւնները պարզ զրպարտութիւններ էին որ այդ երկու պետութեանց սահմաններուն մէջ ան կրցաւ մնալ ու գործել Կաթողիկոսի մը բոլոր ազատութիւններով:

Եւ սակայն այդ զրպարտութիւնները, որոնց հիմը եղաւ Յակոբ Զուղայեցիի Աղէքսապր Պապին ուղղած նամակին մէջ սովորական, անմեղ եւ քաղաքավարական արտայայտութիւնը՝ ցանկալ

Պապը անձամբ տեսնելու: Յակոբ Զուղայեցի կրնար թէ Պարսկաստանէն եւ թէ Թուրքիայէն հեշտութեամբ փախչիլ ու անցնիլ Եւրոպա, բան մը որ ո՛չ ըրաւ եւ ո՛չ ալ խորհեցաւ ընել: Երբ ժամանակը եկաւ Պարսկաստանէն փախչելու Էջմիածնայ տարապարհակ պարտքերուն պատճառաւ, ան կրցաւ հեշտութեամբ ատիկա կատարել եւ անցնիլ Թիֆլիս եւ անկէ ալ Թուրքիա եւ դալ Պոլիս, ուր եւ վախճանեցաւ 1680 Օգոստոս 1-ին:

Յակոբ Զուղայեցիի դէմ իր թշնամիներուն զրպարտութիւնը շարունակեց արձագանդ գտնել: Իր թշնամիները անոր վերագրեցին Հայկական թաղաւորութիւն մը հաստատելու առասպելական զրպարտութիւնը: Լատինամիտները անոր վերագրեցին Հռոմէադաւանութիւն եւ Պապին ենթարկուելու, անոր քով ապաստանելու յերիւրածոյ պատմութիւնը: Բնական է, պատահեցան նոյնիսկ օտարներ, որոնք ահանջ դրին եղած անհիմն փախուքներու, եւ իբր տեղական անցուղարձներու լաւատեղեակ հաւատողներ արձագանդ եղան այդ անհիմն ըսուածներուն, որոնք բացարձակապէս ոչ մէկ հաստատուն եւ լուրջ տուեալներով կարելի է հաստատել մինչեւ հիմա, թէ եւ կը շարունակուի ծիծաղելի դադանադիտութիւն մը... որուն նոյնիսկ քննական պատմութեան տարազ կ'ուղեն հաղցնել մեր օրերու բանդէտները:

Այս անհիմն տարածախօսութիւնները կրնային նոյնիսկ Իսրայէլ Օրի անունով բախտախնդրի մը ահանջը հասնիլ Եւրոպայի մէջ եւ անկէ շահադործուիլ, ինչպէս որ ալ տեղի ունեցաւ: Իսրայէլ Օրիի կողմէ նոյնիսկ թուղթեր կեղծուեցան նման բան մը հաստատելու համար, որուն շնորհիւ ան կը ներկայանար հարգատ ժառանգորդը իբրեւ Յակոբ Զուղայեցիէ սկսեալ Հայկ. ազատագրական շարժման մը: Եւ սակայն կեղծարար Իսրայէլ Օրի զուրկ կարեւոր մանրամասնութեանց մասին հարկ եղած կենսական տեղեկութիւններէ, կազմեց բոլորովին ստապատում շինուածք մը, որ զարմանալիօրէն մինչեւ մեր օրերը կարելի եղաւ կուլ տալ եւ կլլեցնել, բան մը որ նպաստաւոր չէ մեր սզգային բանասիր-